# ԺԹ.00.06 - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Քաղաքական հոգեբանությունը որպես գիտություն:** Քաղաքականությունը՝ որպես մարդկային հատուկ գործունեություն և հոգեբանության հետազոտման օբյեկտ: Քաղաքական հոգեբանության առարկան. մեկնաբանման երկիմաստություն: Քաղաքական հոգեբանության նպատակներն ու խնդիրները՝ որպես գիտական գիտելիքների ճյուղ: Քաղաքական հոգեբանության հիմնական սկզբունքները: Քաղաքական հոգեբանությունը քաղաքական գիտությունների համակարգում:

**Քաղաքական հոգեբանության հիմնական դպրոցները**: Առաջատար դպրոցներ և քաղաքական հոգեբանության ուղղություններ. Պոզիտիվ («Քաղաքական աջակցության» տեսություն, դերային տեսություն) և հակապոզիտիվ (կոգնիտիվ և հումանիստական ուղղություններ, հոգեվերլուծություն) հիմնադրույթները և դրանց քննադատությունը:

**Քաղաքական հոգեբանության պատմական ակնարկ:** Քաղաքական և հոգեբանական գաղափարների նախապատմություն: Նրանց տեղը հին հունական, հռոմեական և արևելյան հեղինակների աշխատանքներում: Վերածննդի դարաշրջանի քաղաքական-հոգեբանական գաղափարները: Լուսավորչության դարաշրջանի քաղաքական հոգեբանությունը քաղաքական ռեժիմների քաղաքական հոգեբանություն. դրանց զարգացումները XIX դարում: Քաղաքական-հոգեբանական ուղղության զարգացումը 20-րդ դարի առաջին կեսին: Քաղաքական և հոգեբանական մոտեցումների նկատմամբ հետաքրքրության վերելքը 1980-ականների երկրորդ կեսին: Քաղաքական և հոգեբանական հետազոտությունների վիճակը և դրանց հիմնական ուղղությունները արդի փուլում:

**Անձնավորության քաղաքական հոգեբանություն: Քաղաքական անձը և նրա կայացումը:** Մարդը և քաղաքականությունը: Անձի հիմնախնդրի մասին մոտեցումները քաղաքական-հոգեբանական հետազոտություններում: Անձի տեղը քաղաքական գործընթացի վերլուծության մեջ: Անձի քաղաքական գործունեության գործոնները և տեսակները: Անձի քաղաքական կառուցվածքի դերային բաղադրիչը: Քաղաքական գործունեություն ծավալող անձի կայացումը: Քաղաքական սոցիալականացման և վերասոցիալականացման գործընթացները, դրանց նշանակությունը քաղաքականության նկատմամբ անձի վերաբերմունքի ձևավորման գործում: Քաղաքական ակտիվություն Քաղաքական պասիվություն: Քաղաքական օտարացում:

**Քաղաքական առաջնորդություն. երևույթը, հասկացությունը, առանձնահատկությունները: Լիդերության տեսություններ:** Առաջնորդության երևույթը և հայեցակարգը: Քաղաքական առաջնորդությունը որպես քաղաքական վարքագծի հատուկ տեսակ: Քաղաքական առաջնորդության առաջացման պայմանները: Քաղաքական առաջնորդության բաղադրիչները՝ անձը, միջավայրը և

դրանց փոխազդեցությունը: Առաջնորդություն և ղեկավարում հասկացությունների հարաբերակցությունը: Քաղաքական խարիզմա. հայեցակարգ, վարկածներ և խնդիրներ: Առաջնորդության երևույթի հետազոտություններ: Առաջնորդության քաղաքական-հոգեբանական դասակարգման տեսություններ: Առաջնորդության ոճերն ու մոդելները: Քաղաքական առաջնորդի գործառույթները: Առաջնորդության ֆենոմենի ժամանակակից մոտեցումները:

**Փոքր և մեծ խմբեր. սոցիալ-հոգեբանական տեսանկյուն:** Խումբը՝ որպես քաղաքականության սուբյեկտ: Փոքր խումբ. հիմնական բնութագրերը: Փոքր խմբերի գործունեության հոգեբանական մեխանիզմների հետազոտության հիմնական ուղղությունները: Մեծ սոցիալական խմբերի հոգեբանությունը քաղաքականության մեջ: Մեծ սոցիալական խմբեր. բովանդակությունը և կառուցվածքը: Մեծ սոցիալական խմբերի զարգացման մակարդակները: Մեծ սոցիալական խմբերի տեսակները և դրանց առանձնահատկությունները՝ դասակարգեր, էթնիկ խմբերը:

**Սոցիալական ազդեցության և իշխանության հոգեբանություն:** Սոցիալական ազդեցության պատճառներն ու հնարավորությունները: Ազդեցության հիմնական սկզբունքները: Ազդեցության հիմնական տեխնիկաները քաղաքականության մեջ:

**Իրավաբանական հոգեբանության ընդհանուր հիմունքներ**

Իրավաբանական հոգեբանության առարկան: Իրավաբանական հոգեբանության համակարգը: Իրավաբանական հոգեբանության խնդիրները:

**Իրավաբանական հոգեբանության զարգացումը**:

Իրավաբանական հոգեբանության տեսական հիմքերը: Իրավաբանական հոգեբանության փիլիսոփայական հիմքերը: Իրավաբանական հոգեբանության բնախոսական հիմքերը: Իրավաբանական հոգեբանության իրավական հիմքերը: Իրավաբանական հոգեբանության մեթոդաբանությունը և մեթոդները: Իրավաբանական հոգեբանության մեթոդաբանական հիմքերը: Իրավաբանական հոգեբանության սկզբունքները: Իրավաբանական հոգեբանության մեթոդները: Իրավաբանական հոգեբանության կապը այլ գիտությունների հետ:

**Բարոյազանց և իրավազանց գարքի պատճառականության հոգեբանություն.** Սոցիալական ախտաբանությունը որպես իրավաբանական հոգեբանության բնագավառ:

Անբարենպաստ ընտանիքը՝ անձի սոցախտահարման աղբյուր:

Դաստիրակչական ներգործության անարդյունավետության սոցիալ-հոգեբանական պատճառները և հաղթահարման ուղիները:

**Քրեաբանական հոգեբանություն**: Քրեաբանական հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները: Քրեաբանական հոգեբանության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Քրեաբանական հոգեբանության կապը այլ

գիտությունների հետ: Քրեաբանական հոգեբանության առաջացման և զարգացման նախադրյալները: Քրեաբանական հոգեբանության հիմնական հասկացությունները (կատեգորիալ ապարատը): Քրեաբանական հոգեբանության հետազոտությունների հիմնական ուղղությունները:

**Իրավական հոգեբանություն. առարկան, խնդիրները, հիմնախնդիրները**:

Ընդհանուր գաղափար իրավական հոգեբանության մասին: Իրավական հոգեբանությունը և անձի սոցիալականացումը: Անձի իրավական սոցիալականացման սոցիալ-հոգեբանական պայմանները և ակունքները: Անձի իրավական սոցիալականացման բաղադրատարրերը: Իրավական սոցիալականացման և իրավական դաստիարակությունը: Իրավական սոցիալականացման և անձի իրավագիտակցությունը:

**Քրեական հոգեբանություն:** Քրեական հոգեբանության առարկան և խնդիրները: Հանցագործների հոգեբանական տիպաբանությունը (տիպոլոգիան):

Հանցագործի անձնային ոլորտի հոգեբանական վերլուծությունը: Հանցագործի և հանցագործ խմբերի հոգեաբանական գծերի ախտորոշում: Շահադիտական և բռնաշարքային հանցագործների հոգեբանություն: Հանցագործ խմբի հոգեբանություն:

Անչափահաս հանցագործների հոգեբանություն: Հանցավոր արարքի հոգեբանական գործոնները: Հանցավոր արարքի կառուցվածքը: Մեղքի հոգեբանական առանձնահատկությունները:

**Քրեադատավարական գործունեության հոգեբանություն:** Նախաքննության հոգեբանական հիմունքները: Քննիչի անձի հոգեբանական և մասնագիտական առանձնահատկությունները:

Հարցաքննության կազմակերպման և անցկացման հոգեբանություն: Առերեսման հոգեբանություն: Քննչական գիտափորձի (էքսպերիմենտի) հոգեբանությունը:

**Դատական գործունեության հոգեբանություն:** Դատական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները: Դատավորի հոգեբանությունը: Դատական հարցաքննության հոգեբանությունը: Դատական վիճաբանությունների հոգեբանությունը: Դատական խոսք: Դատավճռի կայացման հոգեբանությունը:

**Դատահոգեբանական փորձաքննություն:** Դատահոգեբանական փորձաքննության ընդհանուր բնութագիրը: Դատահոգեբանական փորձաքննության նախապատրաստումը, նշանակումը, կիրարկումը:

Փորձագետի ընտրությունը և փորձաքննության արդյունքների շարադրումը: Քննիչի հարցերի մոտավոր ցանկը դատահոգեբանական փորձաքննության ընթացքում: Դատահոգեբանական ախտորոշման մեթոդական մոտեցումները:

Աֆեկտի դատահոգեբանական փորձաքննությունը: Դատահոգեբանական փորձաքննությունը՝ սեռական անձեռնամխելիության դեմ կատարված և սեքսուալ բռնությունների գործերով: Անչափահասների դատահոգեբանական փորձաքննությունը: Հետմահու փորձաքննությունը, դրա յուրահատկությունները և նշանակությունը: Դատահոգեբանական փորձաքննության հնարավորությունները տեխնիկայի կառավարման հետ կապված պատահարների գործով:

Դատահոգեբանահոգեբուժական համալիր փորձաքննություն:

Քաղաքացիական գործերի դատահոգեբանական փորձաքննությանը:

**Փաստաբանական գործունեության հոգեբանություն:** Փաստաբանական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները: Փաստաբանի հոգեբանությունը: Փաստաբանի և պաշտպանյալի փոխհարաբերությունների հոգեբանությունը: Քրեական գործերով պաշտպանության մարտավարությունն ու ռազմավարությունը: Փաստաբանի պաշտպանական ճառը:

**Քրեակատարողական (պենիտենցիար) հոգեբանություն:** Ընդհանուր գաղափար քրեակատարողական հոգեբանության մասին: Դատապարտյալի հոգեբանությունը: Դատապարտյալի անձի հոգեբանությունը (վերասոցիալականացման նպատակով դատապարտյալի վրա ներգործության մեթոդները): Քրեակատարողական հիմնարկներում դաստիարակության գործընթացի հոգեբանական բնութագիրը: Դատապարտյալի անձի վրա ներազդեցության որոշ գործոններ: Դատապարտյալների կոլեկտիվի հոգեբանական վերլուծությունը: Պատժի կրումից ազատվածի սոցիալական վերահարմարումը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Արզումանյան Ս.Զ., Գրին Է.Իրավաբանական հոգեբանություն, Երևան, 2004, 432 էջ
2. Հայրապետյան Դ. Ռ. Որոշման ընդունման հոգեբանություն: (Տեսությունների վերլուծություն), Եր.: ԵՊՀ հրատ., 2010 թ., 90 էջ
3. Քաղաքական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ/ Հ. Վ. Մկրտչյան.– Եր.: ԵՊՀ հրատ., 2019, 198 էջ:

1. Аветисян С.С., Убийство в состоянии аффекта, "Зангак-97", Ереван, 2001
2. Алексеев С. С., Введение в юридическую специальность. М., 1980.
3. Андреев А.Л. Политическая психология. - М.: Изд-во "Весь мир", 2002. - 255 с.

4. Антонян Ю. М., Еникеев М. И., Элинов В. Е., Психология преступника и расследование преступлений. М., 1996.
5. Антонян Ю. Н., Роль конкретной жизненной ситуации в совершении преступления. М., 66. 2000
6. Арзуманян С. Д., Психолого-криминологическая теория становления личности правонарушителя, "Зангак-97", Ереван, 2000.
7. Асмолов А. Г., Психология личности. М., 1990.
8. Бендас Т.В. Психология лидерства: Учебное пособие. - СПб.: Питер, 2009. - 230 с.
9. Васильев В. Л., Юридическая психология. М., 2010
10. Водолазский Б. В., Психологические особенности личности осужденного. Омск, 2012
11. Глоточкин А. Д., Пирожков В. Ф., Исправительно-трудовая психология. Рязань, 2005
12. Грин Э., Психологичесий аспект самоубийства, «Հոգեբանությունը և կյանքը», «Զանգակ-97», Երևան, 2000, No 1
13. Гуревич П.С. Политическая психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2008. - 340 с
14. Еникеев М. И., Черных Э. А., Психология следствия, М., 2009
15. Изард К., Эмоции человека. М., 2009
16. Илларионов В. П., Переговоры с преступниками. М., 2018
17. Зимбардо Ф., Ляйппе М. Социальное влияние . СПб.: Питер, 2001, 448 с.
18. Коновалова В. В., Правовая психология. Харьков, 1990.
19. Коченов М. М., Судебно-психологическая экспертиза, М., 2007
20. Коченов М. М., Осипова Н. Р., Психология допроса малолетних свидетелей. М.,2000
21. Лившиц Е. М., Белкин Р. С., Тактика следственных действий, М., 2002.
22. Личко А. Е., Психопатии и акцентуации характера у подростков. Л., 2003.
23. Личность преступника (под ред. В. Н. Кудрявцева). М., 2012
24. Назаретян А.П. Агрессивная толпа, массовая паника, слухи. Лекции по социальной и политической психологии. - СПб.: Издательство: Питер, 2003 г. - 192 с

25. Ратинов А. Р., Судебная психология для следователей, М., 2012.
26. Ратинов А. Р., Психологическое изучение личности преступника. М., 2011.
27. Романов В. В., Юридическая психология. М., 2005.
28. Сафуанов Ф. С., Судебно-психологическая экспертиза в уголовном процессе, "Смысл", Гардарика, М., 2008.
29. Ситковская О. Д., Аффект. Криминально-психологическое исследование,"Юрлитинформ", М., 2011.
30. Чалдини Р. Психология влияния. - СПб.: Питер, 2006. - 288 с. 59.
31. Шейнов В.П. Психология влияния: Скрытое управление, манипулирование и защита от них. - М.: Ось-89, 2008. - 400 с. 60.
32. Шейнов В.П. Психология лидерства, влияния, власти. - Минск: Харвест, 2008. - 340 с
33. Яковлев А.М. Преступность и социальная психология. М., 2018